ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1960 Общественные науки

Ռ. Ջ. Ցուգարյան

ՌՈՄԱՆՏԻԿԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՋ

Սովետական գրականության առաջատար հարցերից մեկը սոցիալիստական ռեալիզմի գրականության առանձնահատկությունների, այդ թվում և ռոմանտիկականի հարցն է, որը պետք է գիտվի նաև գրականության զարգացման նախորդ էտապների հետ ունեցած կապերի առումով։

Մեր գրականագիտության մեջ ուսումնասիրություններն ու հետազոտությունները գերազանցապես վարվում են սոցիալիստական ռեալիզմի գրականության և 19-րդ դարի, այսպես կոչված, կլասիկ ռեալիզմի, մասնավորապես 19-րդ դարի ռուսական ռեալիստական գրականության և քննադատական ռեալիզմի միջև եղած կապերի ուղղությամբ։ Սոցիալիստական ռեալիզմի և անցյալի գրականության կապերի ու փոխհարաբերությունների քննարկման նման ուղղվածությունը, անշուշտ, արդյունավետ է, բայց ոչ ամբողջական։

Լենինյան այն դրույթը, թե պրոլետարիատի սոցիալիստական կուլտուրան չի կարող ինչ-որ մի տեղից պատրաստի ընկնել, որ նա կարող է ստեղծվել և ստեղծվում է միայն մարդկության կողմից պատմական զարգացմամբ ստեղծված կուլտուրական ժառանգության քննադատական վերամշակման ու յուրացման ուղիով, ամբողջությամբ, առանց որևէ վերապահման, վերաբերում է նաև գրականությանը։

Ինչ խոսք, որ գրականության զարգացման անցյալի բոլոր էտապները չեն կարող հավասարարժեք լինել, և մեր գրականությանը տալ միատեսակ ընդունելի առաջադիմական տրադիցիաներ, գեղարվեստական կոնկրետացման միջոցներ ու ձևեր։ Այս առումով միանգամայն պատճառաբանված է այն մոտեցումը, երբ սոցիալիստական ռեալիզմի գրականությունը առաջին հերթին դիտում են 19-րդ դարի Ռուսական Ռեալիստական գրականության հետ ունեցած կապերի մեջ։ Բայց այդ բոլորովին չի նշանակում, թե մի կողմ պետք է թողնել անցյալի գրական-ստեղծագործական մնացած էտապները։ Սոցիալիստական ռեալիզմի գրականությունը ոչ միայն չի ժխտում համաշխարհային գրականության զարգացման նախորդ էտապների նվաճումները, այլ օգտագործում է նրա ողջ հարստությունը, ժառանգում և զարգացնում նրա առաջադիմական տրադիցիաները։ Մեր գրականագիտության մեջ սակայն իր հանգամանալից բացահայտությունը չի գտել սոցիալիստական ռեալիզմին հատուկ ռևոլյուցիոն ռոմանտիկան և այն կապերը, որ սոցիալիստական ռեալիզմի գրականությունն ունի անցյալի ռևոլյուցիոն ռոմանտիզմի ու նրա առաջադիմական տրադիցիաների հետ։

19-րդ դարի ռոմանտիզմի գրականությունը, հատկապես նրա առաջադիմական ռևոլյուցիոն թևը ստեղծել է ոչ աննշան գեղարվեստական արժեքներ, որոնց քննադատական յուրացումը քիչ օգտակար չի կարող լինել սոցիալիստական ռեալիզմի գրականության համար։ Ինչ խոսք, որ գրական զարգացման նա-

խորդ էտապներում ստեղծագործական ռեալիստական ուղղություններ եղել է ստեղծագործական այն մեթոդը, որը ունեցել է կյանքի ճշմարտություններ բացահայտելու շատ ավելի մեծ հնարավորություններ, բայց այդ չի նշանակում, թե գրականության մեջ եղած մնացած հոսանքները և ուղղությունները, այդ թվում և ռոմանտիզմը, ոչինչ արժեքավոր չեն տվել։ Չի կարելի բանն այնպես պատկերացնել, թե ռոմանտիզմը մի թյուրիմացություն էր, պատահական մի վիժվածք՝ գրականության և արվեստի վերընթաց զարգացման ճանապարհին։ Ռոմանտիզմի գրականությունը մի ամբողջ պատմական դարաշրջանի իրականության գեղարվեստական մեթոդ էր, գեղարվեստական մտածողության ինքնատիպ մի ձև։

* *

Այս հոդվածում մեր նպատակը չէ հանգամանորեն քննարկել 19-րդ դարի ռոմանտիկական գրականության հարցերը, բայց որքանով սոցիալիստական ռեալիզմին հատուկ ռոմանտիկականի պրոբլեմը ինքնին ենթադրում է դեպի անցյալի ռևոլյուցիոն ռոմանտիզմի տրադիցիաները կատարվելիք էքսկուրսի անհրաժեշտություն, ապա չենք կարող այդ առումով չանդրադառնալ նրա մի քանի էական առանձնահատկություններին։

19-րդ դարի ռոմանտիզմի նշանավոր ներկայացուցիչները ստեղծել են գեղարվեստական աչքի ընկնող շատ արժեքներ, որոնք 19-րդ դարի ռեալիստական գրականության կողքին բոլորովին չեն նսեմանում։ Երբեք հնարավոր չէ Ստենդալի և Բալզակի կողքին չտեսնել Հյուգոյին կամ Ժորժ Սանդին. Դիկենսի և Թեկերեյի ժառանգությունը երբեք չի կարող ստվերել Բայրոնի, Շելլիի կամ Վոլտեր Սկոտի ստեղծագործությունները։ Հայ իրականության մեջ Շիրվանզադեի և Նար-Դոսի կողքին չի կարելի չտեսնել Րաֆֆուն, Մերենցին կամ Մուրացանին։

Այն բոլոր փորձերը, որոնք նպատակ ունեն Բայրոնի, Վոլտեր Սկոտի կամ Հյուգոյի ստեղծագործության որոշ շրջան, կամ առնվազն նրանց որոշ նշանավոր ստեղծագործություններ, Հայնեի ստեղծագործական որոշ էտապ գիտել որպես ռեալիստական, կամ անցում ռեալիստական ուղու, լոկ անհասկանալի ու չպատճառաբանված ձգտումներ են։ Նման տենդենցներ արտահայտվել են նաև սովետահայ գրականագիտության մեջ։

19-րդ դարի ռոմանտիզմը երբեք միատարր չի եղել՝ ոչ ընդհանրապես համաշխարհային գրականության մեջ, և ոչ էլ առանձին երկրների ազգային գրականությունների շրջանակներում։ Ռոմանտիզմի գրականության մեջ նկատելի է երկու հակադիր թևերի որոշակի գոյություն։ Նրա մի թևը կապվում էր միջնադարի ֆեոդալ-ազնվական և կաթոլիկական եկեղեցու տիրապետության վերակենդանացման համար ռեակցիոն ուժերի մղած պայքարի հետ և դառնում նրա ռեակցիոն իդեոլոգիայի արտահայտությունը, իսկ դրան հակառակ, ռոմանտիկների մյուս, առաջադիմական թևը, ժամանակակից բուրժուա-արիստոկրատական հասարակության քննադատության ուղիով՝ քայլում էր դեպի առաջ, դեպի առաջադիմություն և շատ հաճախ հանգում արմատական ռևոլյուցիոն վերափոխությունների անհրաժեշտության։ Ռոմանտիզմի մեջ Նովալիսի, Տիկի, Բրենտանոյի ռեակցիոն թևի կողքին գործել է Բայրոնի, Շելլիի, Հյուգոյի և այլ առաջադիմական ռևոլյուցիոն ռոմանտիկների խմբավորումը։ 19-րդ դարի ռոմանտիզմի գրականությունը իր ամբողջու-

թյան մեջ իրականում պետք է բնութագրվի ոչ թե Նովալիսի, Շատորրիանի և նման ռեակցիոն ռոմանտիկների ստեղծագործությամբ, այլ Բայրոնի, Շելլիի, Հյուգոյի, Հայնեի և այլ ռևոլյուցիոն ռոմանտիկների ստեղծագործությամբ։ Ռոմանտիկների այս ուղղությունն է իրականում ստեղծել ռոմանտիզմի գեղարվեստական մոնումենտալ, իրոք մնայուն արժեք ներկայացնող ժառանգությունը։ Ելնել ռոմանտիզմի ռեակցիոն թևից և ժխտել ռոմանտիկական գրականության ստեղծած գեղարվեստական ժառանգությունը, կամ այն որևէ կերպ որդեգրել ռեալիզմին, այդ նշանակում է կեղտաջրի հետ միասին մանկանն էլ դեն նետել, կամ նրան հարազատ մորից վերցնել ու տալ խորթ մորը։

* * *

Ռոմանտիզմի մասին խոսելուց ու գրելուց սովորաբար ընդգծում են նրա հրազանգային բնույթը, վերացականությունը, նրանում անհավանական, իրական կոնկրետություն չունեցող վիճակների, դրությունների ու ելքերի առկայությունը և այլն։ Պետք է նկատել, որ այս հատկանիշները ռոմանտիզմի գրականության մեջ կան, բայց նրանք ունեն հատուկ պայմանավորվածություն և պատճառաբանվում են ոչ միայն ստեղծագործական ռոմանտիկական մեթոդի առանձնահատկություններով, այլ միաժամանակ և էպոխայի պատմահասարակական և քաղաքական յուրահատկություններով։ Այդ դեպքերի առկայությունը առաջադիմական ռոմանտիկների ստեղծագործություններում բոլորովին էլ չի նշանակում իրականությունից կտրվել, փախուստ տալ նրանից, կամ մոռանալ ժամանակի իրական պահանջները ու հուզող հարցերը։ Ռոմանտիզմի մեծ ներկայացուցիչները՝ Բայրոնը, Շելլին, Հայնեն, Հյուգոն և ուրիշները, ապրել են իրենց էպոխայի քաղաքական շահագրգռություններով, ելել են հասարակական կյանքի բարդ ու բազմակողմանի զարգացման պրոցեսի հորձանուտի կենտրոնում և արձագանքել ժամանակաշրջանի հասարակական միտքը զբաղեցնող հարցերին ու պրոբլեմներին։ Առաջադիմական ռոմանտիկների բնութագրական առանձնահատկությունն այն է, որ նրանք իրենց գեղարվեստական ստեղծագործությամբ միայն պասսիվ արձագանքողներ չեն եղել, այլև փորձել են տալ էպոխայի քաղաքական ու սոցիալական հուզող հարցերի պատասխանները, որոնել նրանց լուծման ճանապարհները։ Նրանք նկատել են իրենց էպոխայի սոցիալական ու քաղաքական շատ հակասություններ ու իրենց մեթոդին հատուկ կրքոտությամբ խարազանել ու մերկացրել այդ ամենը։ Բայրոնի ստեղծագործությունը մի կրքոտ ու ցասումնալից սպոզիցիա է ընդդեմ քաղաքական ու սոցիալական հակամարդկային բռնատման, կաշկանդումների ու կապանքների այն ողջ ռեակցիոն կոմպլեքսի դեմ, որ ստեղծվել էր Եվրոպայում «Սրբազան դաշինքի» ռեակցիոն քաղաքական տիրապետության հետևանքով։ Շելլիի ստեղծագործության մեջ տիեզերական մոնումենտալության հասնող պաթոսի ուժով, ազատության անզուսպ ձգտմամբ դաժան ու անխնա քննադատության է ենթարկվել ժամանակի անգլիական և համաեվրոպական քաղաքական մռայլ ռեակցիան, սոցիալական անարդարությունն ու ճնշումը, մարդ անհատի ստրկական վիճակը և գովերգվել նրա ազատատենչ ոգին։ Հյուգոյի մոնումենտալ վեպերում տաղանդի բացառիկ ուժով պատկերված է սոցիալական այն ահավոր թշվառությունը, նյութական կարիքն ու անհատի իրավունքների քաղաքական սահմանափակությունը, որն այնքան տիպական էր ոչ միայն ֆրանսիական, այլև եվրոպական

իրականության համար։ Հասարակական իրականության քաղաքական և սոցիալական պրակտիկայի բազմակողմանի քննադատություններ տալու հետ միաժամանակ առաջադիմական ռոմանտիկները իրենց լավագույն ստեղծագործություններում առաջ էին քաշում իրականության վերափոխման հարցերը։ Իրականության վերափոխման հարցը շատ հաճախ դրվում էր արմատական ձևով, ընդհուպ մինչև ռևոլյուցիոն ուղու ընդունումը։

19-րդ դարի առաջադիմական-ռևոլյուցիոն ռոմանտիկների ստեղծագործության մեջ արտահայտված ռևոլյուցիոն գաղափարները ըստ արժանվույն գնահատվել են ինչպես ռուս-ռևոլյուցիոն դեմոկրատների, այնպես էլ մարքսիզմի կլասիկների կողմից։

Բելինսկին խոսելով Բայրոնի մասին, առաջին հերթին ընդգծում է նրա պոեզիայի ռևոլյուցիոն էությունը, այն, որ նա իր ստեղծագործության մեջ հիմնականում նայում է դեպի առաջ, դեպի ապագան. «Նա (Բայրոնը — Ռ. Տ.) նայել է ոչ թե դեպի ետ,— գրում է Բելինսկին,— այլ դեպի առաջ»։ Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը Բայրոնին դիտում են որպես սոցիալական անարդարությունների դեմ մղվող պայքարը քաջարի մարտիկ։

Ռևոլյուցիոն ոգով է տոգորված առանձնապես Բայրոնի ժամանակակից Շելլիի ստեղծագործությունը։ Շելլիի պոեզիան բնութագրվում է ռևոլյուցիոն օպտիմիզմով, խորն ու պայծառ հավատով դեպի երջանիկ ապագան, անխախտ համոզմունքով այն բանի հանդեպ, որ մարդկությունը անպայման կհասնի բաղձալի ազատությանը։ Իզուր չէ, որ Էնգելսը նրան համարում է «Հանճարեղ մարգարե»։ Շելլին մարդ անհատի, հասարակության, երբեմն ողջ բնության ու Տիեզերքի ազատագրությունը, քաղաքական կապանքների և սոցիալական ստրկության շղթաների փշրումը հնարավոր է համարում ռևոլյուցիոն բռնության ճանապարհով։ Շելլիի մոտ ապագան սոցիալական անարդարություններից և անհավասարություններից, քաղաքական ու սոցիալական ճնշումներից ազատագրված իրականություն է։ Նա իրոք կպատկաներ սոցիալիզմի ավանգարդին, ինչպես նկատում է Մարքսը։ Դեպի սոցիալիստական ազատ ապագան ունեցած հայացքը Շելլիի մոտ, ճիշտ է, մշուշապատ է, վերացական, զուրկ առարկայական կոնկրետությունից, բայց փայլում է հավատի իր ուժով ու հումանիզմով։

Շելլիի համար պոեզիան ունի հասարակական-դաստիարակչական մեծ նշանակություն։ Իր «Իսլամի ապստամբությունը» պոեմի առաջաբանում Շելլին գրում է, թե պոետի խնդիրն է ընթերցողի հոգու մեջ առաջացնել շնորհալի պոռթկում, կատարելագործման բոցաշունչ ցանկություն, խորը ու ուժեղ հետաքրքրություն։ Եվ այդ ամենը, ըստ Շելլիի, պետք է ուղղված լինի ապագայի հաստատման նպատակին։ «Պոեզիայի պաշտպանությունը» տրակտատում Շելլին ձևակերպում է իր և ընդհանրապես 19-րդ դարի ռևոլյուցիոն ռոմանտիզմի դիրքորոշումը։

Պոետը, ըստ նրա, ոչ միայն ուշադիր, թափանցող հայացքով ընկալում է ներկան, ինչպես այն կա, և բացահայտում այն օրենքները, որի համաձայն այդ ներկայի տարրերը պետք է կազմակերպված լինեն, այլ, բացի դրանից նա ներկայի մեջ պետք է տեսնի ապագան։

Այդ միտքը Շելլին մի այլ տեղ ավելի կոնկրետ է արտահայտում։ Հույն ժողովրդի ազգային ազատագրական պայքարին նվիրված իր «Էլլադա» լիրի-

կական պոեմում Շելլին գրում է, թե անհրաժեշտ է ապագայի վրայից դեն նետել ծածկոցը, որը մեզնից թաքցնում է չկատարված գեպքերը։

Այս սկզբունքները, առավել կամ նվազ չափով, տիպական են անցյալի ռևոլյուցիոն ռոմանտիզմի ներկայացուցիչների ստեղծագործության համար։ Ռևոլյուցիոն ռոմանտիկների մոտ ապագայի ռոմանտիկական պատկերը, մշուշապատ է, ոչ հստակ։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Անցյալի առաջադիմական ռոմանտիկները չէին կարող հշմարտացի, որոշակի ու հստակ պատկերացում ունենալ ո՛չ ապագայի մասին և ո՛չ էլ նրա ստեղծման ուղիների մասին։ Ռոմանտիկների մոտ հերոսների իդեալները և իրական հարաբերությունները ներհակ էին, այդ իդեալները հանդես էին գալիս որպես բացասում իրական հարաբերությունների, և այլ կերպ էլ չէր կարող լինել։ Հե՛նց դրանում էր ռևոլյուցիոն ռոմանտիզմի առաջադիմականության տենդենցը, նրա ռևոլյուցիոնությունը։ Այստեղից էլ առաջանում էր այն վերացականությունը, որ հատուկ է ռոմանտիկներին, և այն կտրվածությունը, որ կար ռոմանտիկական ձգտումների և իրականության միջև։ Այդ կտրվածությունը իրականությունից փախուստ չէր, այլ նրա դեմ ծառանալու, այն ակտիվ ու կրքոտ բացասելու մի ուրույն ձև։

Անցյալի ռևոլյուցիոն ռոմանտիկների առաջադիմական տրամադրությունները նշանակալից ներդրումներ են, և սոցիալիստական ռեալիզմի գրականությունը այն պետք է բնականաբար օգտագործի և յուրացնի։

* *

Ռևոլյուցիոն ռոմանտիկան սոցիալիստական ռեալիզմի բնութագրական առանձնահատկությունն է։ Այն սերտորեն ներդաշնակված է ռեալիզմի հետ և նրա հետ կազմում է մի այնպիսի օրգանական միասնություն, առանց որի սոցիալիստական ռեալիզմի օրինաչափություններն ու առանձնահատկությունները հնարավոր չէ հասկանալ ու բացահայտել։ Սոցիալիստական ռեալիզմի գրականության ստեղծագործական մեթոդի ներքին էության հատկանշական կողմը, նրա որակական բնութագրական առանձնահատկություններից մեկը, իրականության իսկն ու բազմակողմանի ռեալիստական արտացոլման գերագույն պահանջի և ռոմանտիկականի, այսպես ասած, միավորումը, նրանց միասնությունն է։

Ոչինչ պարադոքսային չկա այն բանում, որ սոցիալիստական ռեալիզմի մեջ միավորվում են մի կողմից անցյալի գրականության մեջ մշակված ու զարգացման որոշակի հաջողություններ հասած ռեալիստական գրականության առաջադիմական տենդենցները և ռոմանտիզմի ձեռք բերած նվաճումները ու բարձրացվում մի նոր աստիճանի։ Այս երկու կողմերի միավորումը մեխանիկական համակցություն չէ, այլ ստեղծագործական ներդաշնակում, որը տալիս է մի օրգանական միասնություն։ Ռոմանտիկականը սոցիալիստական ռեալիզմի գրականության մեջ ենթադրվում է ինքնին, այն բխում է սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդի բնույթից և պայմանավորվում է իրական ու գաղափարական համապատասխան գործոններով։ Առանց այսպիսի օրգանական միասնության սոցիալիստական ռեալիզմի գրականությունը կմնար յուրահատուկ սահմանափակության մեջ։

20—30-ական թվականների սովետական գրականության փորձը Գորկուն արդեն հնարավորություն էր տալիս, որպես պրակտիկ պահանջ, առաջ քաշելու սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդին հատուկ ռեալիստականի և ռոմանտիկականի սերտ միասնությունը։ Նա իրավացիորեն նկատում է թե «չարժե, արդյոք, որոնել հնարավորություններ՝ ռեալիզմը և ռոմանտիզմը միավորելու մի ինչ-որ երրորդ բանի մեջ, որը ունակ լինի հերոսական մեր ժամանակաշրջանը արտացոլելու ավելի վառ գույներով, նրա մասին խոսելու ավելի վեհ, նրան արժանի տոնով»[1]։

Խիստ ու հետևողական ռեալիզմի և ռոմանտիկականի օրգանական ստեղծագործական միասնությունը սոցիալիստական ռեալիզմի գրականության մեջ բացառում է ռեալիզմի և ռոմանտիզմի փոխհարաբերության նախկին հասկացողությունը, որն իր հիմքում ուներ գերազանցապես հակադրության մոմենտը։ Այդ հակադրությունը այժմ ստանում է միասնության բնույթ ու դառնում մեր էպոխայի գրականության մոնոլիտության ու մոնումենտալության գրավականը։ Այն, ինչ անցյալի ռեալիստական մեթոդի համար անհասկանալի էր ու անհնարին, սոցիալիստական ռեալիզմի մեթոդի համար բնական է և ինքնին հասկանալի։ Ռոմանտիկականի իր բնույթով սոցիալիստական ռեալիզմը ազատագրվում է այն սահմանափակությունից, որը հատուկ էր անցյալի ռեալիզմին, անգամ նրա ամենածաղկուն էտապում։ Ռեալիստական հիմքի և ռոմանտիկական հիմքի միասնությունը սոցիալիստական ռեալիզմի գրականության մեջ ինքը՝ կյանքն է բնլադրում, բխում է նրա ռևոլյուցիոն զարգացման օրինաչափություններից և պայմանավորվում նրանով։ Մեր իրականության ներքին բովանդակությունը և նրա արտահայտման իրական ձևերը անխուսափելիորեն ենթադրում են ռոմանտիկականը։ Այս առումով էլ սովետական գրականության մեջ ռոմանտիզմը ինչ որ մի ստարածին, ինքնակա գոյություն ունեցող կատեգորիա չէ, որը կարող է հակադրվել իրականության ճշմարտացի ու խորը արտացոլման պահանջին, այլ մի գործոն է, որով իրականության ճշմարտությունը ավելի խորը ու սիրողական է արտահայտվում։ Անցյալի գրականության մեջ նման անջատվածություն ու հակադրություն, իրոք, գոյություն ուներ։ Եվ ավելին, այն բնութագրական էր անցյալի գրականությանը։ 19-րդ դարի ռևոլյուցիոն առաջադիմական ռոմանտիկների նկարագրական պլանը, իրականության փաստական երևույթների արտացոլումը և ռոմանտիկական իդեալը, ապագայի պատկերը, ոչ միայն չէին համընկնում ու ներդաշնակում, այլ ընդհակառակը, կատարյալ հակադրության մեջ էին։ Այլ կերպ էլ չէր կարող լինել. իրական ճշմարտությունն այդ էր։ 19-րդ դարի սկզբի բուրժուականացնող իրականությունը ոչինչ չէր կարող տալ, որի վրա հենվելով կարելի լիներ կառուցել ապագայի գեղեցիկ իդեալը։ Այդ իդեալը կարող էր հանդես գալ և հանդես էր գալիս որպես հակադրություն գոյություն ունեցող իրականությանը ու, չունենալով դեռևս ոչ մի սոցիալ-դասակարգային համապատասխան հիմք, ստանում էր յուրահատուկ վերացական բնույթ։ Այն հիմնականում մնում էր որպես հրապուրիչ ցանկություն, ձգողական իր ուժով, բայց իրականացման կոնկրետ միջոցներից զուրկ։

Այս առումով սովետական գրականության մեջ պատկերը բոլորովին այլ է։ Մեր գրականության մեջ դրական հեռանկարային իդեալը, ռոմանտիկակա-

[1] Горький, О литературе, стр. 427.

նը և կոնկրետ իրականությունը ոչ միայն ներհակության ու հակադրության մեջ չեն, այլ ընդհակառակը, կազմում են մի միասնություն՝ ներթափանցված իրար, պայմանավորված իրարով։ Ռոմանտիկականը սովետական դրականության մեջ անմիջապես խարսխվում է մեր կյանքի ռեալականության վրա, խիստ օրինաչափորեն բխում է նրանից և դրանով իսկ կազմում այդ ռեալ իրականության օրգանական ամբողջությունը լրացնող կողմ։ Գրողների միության կանոնադրության մեջ սոցիալիստական ռեալիզմի մեթոդին տրված է հետևյալ բնորոշումը. «Սոցիալիստական ռեալիզմը... լինելով սովետական գրականության և գրաքննադատության հիմնական մեթոդը, գրողից պահանջում է իրականության ճշմարտացի և պատմականորեն կոնկրետ արտացոլումը՝ իր ռևոլյուցիոն զարգացման մեջ։ Դրա հետ միաժամանակ ճշմարտությունը և պատմական կոնկրետությունը պետք է զուգակցվի աշխատավոր մարդկանց գաղափարական վերափոխմանը և դաստիարակությանը սոցիալիզմի ոգով»։ Այս ձևակերպման մեջ շատ էական է այն, որ իրականության ճշմարտության և պատմական կոնկրետության հարցը կապվում է իրականության ռևոլյուցիոն զարգացման հետ։

Այստեղ արդեն ինքնին տրվում է մեր գրականության ռոմանտիկայի հարցը։ Իրականության ռևոլյուցիոն զարգացումը գրականության մեջ գեղարվեստորեն մարմնավորվելը չի կարող հանդես գալ այլ կերպ, քան զարգացման հեռանկարների պատկերման կոնկրետության ուղիով։ Այս բնորոշման բնութագրական կողմն այն է, որ նրանում համադրվում է երկու մոմենտ՝ մի կողմից իրականության հարազատ վերարտադրությունը, ռեալ իրականության հարազատ մնալու պահանջը, մյուս կողմից այդ իրականության սահմաններից դուրս գալը։ Կարծեք թե այս երկու մոմենտները գտնվում են հակադրության մեջ՝ մի կողմից հարազատությունն այն ամենի, ինչ կա, գոյություն ունի, մյուս կողմից նրանից անցնելը դեպի առաջ. հակադրություն այն բանում, որ մի կողմից պահանջվում է ճշմարտացի վերարտադրել իրականության դեպքերը ու երևույթները, իսկ մյուս կողմից տալ այն, ինչը տակավին առարկայական շոշափելիություն չունի, այն, ինչը մեր ապագայի, մեր գալիքի բնորոշ կողմն է։ Այս թվացող հակասությունը, սակայն, իրականության զարգացման ներքին օրինաչափության արտահայտությունն է, այդ «հակասություններին» առկայության մեջ է զարգացման դիալեկտիկան, նրա ամբողջականությունը։ Այդ թվացող հակասությամբ, նրա բացահայտմամբ է երևան գալիս իրական ճշմարտությունը, գոյություն ունեցող, արդեն տիրապետող կեցության ճշմարտությունը և զարդացման տենդենցներից բխող գալիքի ճշմարտությունը։ Դա այն է, ինչ վաղն արդեն լիովին բացահայտելու է իր տիրապետող ուժ լինելը և պետք է նրան օգնել այդպիսին դառնալու։ Զարդացման այս պրոցեսը մի ընդհանրական ու անընդհատ շղթա է, որում և ամբողջանում է իրականության զարգացման դիալեկտիկան։ Այս պրոցեսի մեջ հակասական թվացող կողմերը միասնականանում են և հանդես բերում իրական ու ամբողջական ճշմարտությունը և ոչ նրա մի կողմը։ Գրականության խնդիրը մեր ժամանակներում այդ ամբողջական ճշմարտության արտացոլումն ու պատկերումն է։ Սոցիալիստական ռեալիզմի գրականության ուժի ու առավելության, նրա նոր որակ լինելու պայմաններից մեկը հենց այն է, որ նա հենվելով մարքս-լենինյան ռևոլյուցիոն աշխարհայացքի վրա, կարողանում է հաղթահարել անցյալի գրականություններին հատուկ միակողմանիությունը, նրանց սահմանափակությունները—հա-

կազրություն թվացող կողմերի ու սկզբունքների, ռեալ գոյություն ունեցողի և լինելիության պրոցեսի մեջ գտնվողի միջև եղած հակասությունը և տալ նրանց օրգանական միասնությունը, դիալեկտիկական ամբողջականությունը։ Այս ուղիով է սովետական գրականությունը հասնում իրականության առավել խորն ու ճշմարտացի վերարտադրությանը։ Այն, ինչ իրականության վերընթաց զարգացման պրոցեսի մեջ հանդիսանում է ռեալությունը, այն նորը, որը զարգացման օբյեկտիվ օրինաչափությամբ անխուսափելի տիրապետության ունդենցներն ունի, այն գեղարվեստական գրականության մեջ ստեղծում է ռոմանտիկականը և դառնում ռոմանտիկականի բովանդակությունը։

Այստեղից հետևում է, որ ճշմարտությունը սոցիալիստական ռեալիզմի մեթոդի ռեալիստական պլանի մեջ չէ միայն, այլ ոչ պակաս նաև ռոմանտիկական սկզբի մեջ։ Ճշմարտությունը և ռոմանտիկականը ներհակ ու հակադիր չեն, այլ միասնական են. ռոմանտիկականը իրականության ճշմարտությունից հեռացում չէ, այլ նրա ավելի ամբողջական արտահայտությունը ապահովող միջոցներից մեկը։

Սոցիալիստական ռեալիզմի գրականության մեջ ռոմանտիկականը դտնվում է, կամ արտահայտվում է ռեալիստականի մեջ, ռեալիստականի հետ միասնաբար, նրա հետ ունեցած օրգանական կապերի ու ներթափանցումների մեջ։ Հեղինակը որքան ավելի մոտ ու հարազատ լինի իրականությանը, որքան ավելի խորը թափանցի երևույթների մեջ, մեր մարդկանց գործունեության մեջ, որքան ավելի աներևր կանգնած լինի մարքս-լենինյան ուսմունքի վրա, այնքան ավելի խորն ու ամբողջական կարտացոլի իրականությունը, այնքան ավելի հստակ կպատկերանա մեր ապագան։ Առանց ռեալությունի, կյանքի, մարդկային միտքն ու զգացմունքները խթանող կենսունակ ռոմանտիկայի սովետական ժամանակաշրջանին հատուկ հերոսական արվեստ ու գրականություն պատկերացնել հնարավոր չէ։ Մեր գրողների ստեղծագործական պրոցեսի հիմքում պետք է արթուն գործի լենինյան երազանքը, երազանք, որը կոչված է, իրականության ռեալ գործոնները հաշվի առնելու հիմքի վրա, նրանց խորքից ելնելով՝ ձգտի դեպի իրականանալի կատարյալը, դեպի հասունանալի ու առարկայական մարմնավորման բոլոր տենդենցներն ունեցող իդեալը։ Մեր հասարակության պայմաններում անսպառ են յուրաքանչյուր համարձակ երազանք իրականությանն վերածելու հնարավորությունները։ Սովետական գրականության ռոմանտիկան այդ կենարար ու կենաստեղծ երազանքի արտահայտությունն է, մի բան, որը անհասկանալի է անցյալ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի ռեալիզմի ներկայացուցիչների համար արևմուտքում։ Բոլորովին էլ պատահական չէ, որ բոլշևիկյան ռեալությունի, կյանքի վերափոխման անհրաժեշտությունից բխող, և նրան նպաստող երազանքը անհասկանալի է բուրժուական նախապաշարմունքներ ու սահմանափակություններ ունեցող հեղինակների համար։ Ստանդիսի մի հեղինակ, ինչպիսին անգլիացի Ուելսն էր, որի ստեղծագործական տարերքի համար տիպական էր գիտա-ֆանտաստիկ վեպը, Լենինին բնութագրեց «Կրեմլի երազող» բառերով, բայց չկարողացավ հասկանալ լենինյան ռեալությունի երազանքի կենսաստեղծ, ռեալությունի-ստեղծագործական էությունը։

Սոցիալիստական ռեալիզմի սովետական գրականության ռեալությունի ռոմանտիկայի ինքնատիպությունը իր էմպիրիկ հիմքով պայմանավորված է սովետական հասարակության ու նրա զարգացման առանձնահատկությու-

ներով, իսկ իր տեսական հիմքով այն ելնում է մարքս-լենինյան դիալեկտիկական մատերիալիզմի ուսմունքից։

* * *

Սոցիալիստական ռեալիզմի գրականության արշալույսն արդեն կապվեց սոցիալ-հասարակական ու պատմական այն համաշխարհային տեղաշարժերի հետ, որոնք տեղի էին ունենում մեր երկրում։ 20-րդ դարի արշալույսին ռուսական պրոլետարիատը վճռականորեն պատմական արենա մտավ՝ որպես նոր ժամանակների հաստատողի։ Ռուսական 1905 թվականի ռևոլյուցիան արդեն ի լուր աշխարհի ազդարարում էր իր պատմական միսիան։ Պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարն Ռուսաստանում փոխում էր ուժերի հարաբերությունը մեր երկրում և համաշխարհային պատմության արենայում։ Լենինյան Կոմունիստական պարտիան՝ հենված մարքսիստական ուսմունքի և պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի նոր էտապի պրակտիկայի վրա, կազմակերպում էր աշխատավոր մարդկության պայքարը հին աշխարհի դեմ, ընդգծում էր նրա հեռանկարները և ոգեշնչում պրոլետարիատին՝ ռևոլյուցիոն պայքարի համար։ Մեր երկրի և համաշխարհային պատմության համար այդ բեկվող էտապում ձևավորվեց սոցիալիստական ռեալիզմի պրոլետարական գրականությունը, որն իր լավագույն արտահայտություններ գտավ առաջին հերթին Գորկու ստեղծագործություններում։

Սոցիալիստական ռեալիզմի գրականության հետագա զարգացման համար որոշիչ նշանակություն ունեցավ Հոկտեմբերյան հերոսական ռևոլյուցիան, որով պատմությունը ճեղքվեց, մարդկությունը մտավ իր զարգացման նոր էտապը, ավարտվեց, Էնգելսի արտահայտությամբ, մարդկության նախապատմությունը, և սկսվեց նրա նոր, իսկական պատմությունը։ Աշխատավոր մարդկության, մինչ այդ երբեք չտեսնված ուժի թափով բացվեց մարդկության դարավոր երազանքների իրականացման լայն պողոտան։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայով մարդն առաջին անգամ ստացավ իր լիակատար ազատությունը, իր իրական ինքնորոշումը։ Բացվեցին անհատի և հասարակության ներդաշնակ զարգացման բոլոր հնարավորությունները։ Սովետական երկրի պատմության առաջին իսկ տարիները իրական փաստ ու առարկայական շոշափելիություն դարձրին մասսայական հերոսությունը, որը գնալով ծավալվեց և տվեց իր պատմական հոյակապ արդյունքները։ Մարդկային, հազարամյակներ լոկ գեղեցիկ ու տենչալի ցանկություններ մնացած երազանքներն ու նպատակները, վերջապես իրական են դարձել մեր հասարակության մեջ։ Այն, ինչ անցյալի անհամար մտածողների ու արվեստագետների, ողջ աշխատավոր մարդկության համար եղել է սոսկ հեռավոր, անհասանելի իդեալ, այժմ մեր հասարակության մեջ դարձել է առարկայական կեցություն։ Մարդը վերջնականորեն ազատագրվել է յուրաքանչյուր շահագործումից, հասարակական, սոցիալական ու քաղաքական ամեն ձևի ու տեսակի ստրկանքներից ու կաշկանդումներից, հասել ազատ ու ստեղծարար աշխատանքին և նրա բարիքներն ու հմայքը ճաշակելուն։ Այն, ինչ անցյալում գրականության մեջ, արվեստում և ընդհանրապես մարդկանց մոտ կարող էր հանդես գալ լոկ որպես զուտ ռոմանտիկական երազանք, անհասանելի ու տենչալի իդեալ, մեր հասարակության պայմաններում դառնում է իրականություն։

Հասարակության սոցիալական և քաղաքական պայմանների վերափոխումը, մարդկային կյանքի պայմանների անընդհատ զարգացումը կատարելության վերընթաց աստիճաններով, ինքնին բերել է նաև մտածության ու վարքագծի, դեպի աշխատանքը, հասարակությունն ու մարդիկ ունեցած վերաբերմունքի, էմոցիոնալ հատկությունների, անգամ վայելքների ու ակնկալումների փոփոխություն։ Մարդկանց հասարակական հարաբերություններում և նրանց անհատական կապերում վերջնականապես տիրապետել է սոցիալիստական հարաբերությունների բնույթը։ Կոմունիստական հասարակարգի կառուցման պայծառ ու տեսանելի հեռանկարները ոգևորում ու ոգեշնչում են մեր մարդկանց, նրանց մղում մասսայական հերոսացումների և սխրանքների։ Մեր մարդկանց կյանքն ու պրակտիկ գործունեությունը համամարդկայի երջանիկ ապագայի իրական կառուցման համար մղվող պայքարում անձնազոհության բովանդակություն ունի. միայն լավը, դրականը, վեհն ու վսեմն է առաջնորդում նրանց՝ իրենց գործունեության բոլոր բնագավառներում։ Այդ գծերը առավել հերոսական բնույթ են ստանում հին աշխարհի, մարդկության նախապատմությունը վերջավորող ժամանակակից կապիտալիստական աշխարհի դեմ տարվող նրա վերջին ճակատամարտով։ Միանգամայն բնական է, որ իրականության նման առանձնահատուկ հատկանիշների և տիպական գծերի գեղարվեստական ճշմարտացի վերարտադրությունը իր իրական տեսքի մեջ չի կարող չունենալ ռոմանտիկական շունչը, նրա թռվչությունն ու գեղեցկությունը։ Ռոմանտիկականը բովանդակված է մեր հասարակության մեջ, նրա բնույթում, նրա առօրյայում, մարդկանց պրակտիկ գործունեության և նրանց իդեաների, ձգտումների ու ակնկալումների մեջ։ Կյանքի այս առանձնահատկություններն էլ իրենց հերթին պայմանավորել են սոցիալիստական ռեալիզմի գրականության առանձնահատկությունները և նրան տվել մի նոր որակ։

* * *

Սոցիալիստական ռեալիզմի գրականության ինչպես ռեալիստական խորությունը, այնպես էլ ռոմանտիկական ուժը պայմանավորված է մարքս-լենինյան աշխարհայացքի առանձնահատկություններով։ Մարքսիզմ-լենինիզմը մարդկանց տալիս է ոչ միայն իրականության գիտական, խորն ու բազմակողմանի վերլուծության ու բացահայտման կարողություններ, նրա ճշմարտացի ըմբռնման հնարավորություններ, այլ միաժամանակ և գիտական կանխատեսման ուժ։

Մարքս-լենինյան աշխարհայացքը մեր գրականությունը ազատում է ներկայի «ստատուս-քվոյի» սահմանափակ շրջանակներից և նրան ուղղում դեպի գալիքը, դեպի ապագայի հեռանկարների պարզ ու հստակ պատկերացումը։ Որքան հեղինակները ավելի ամուր կանգնած լինեն մեր պարտիայի աշխարհայացքի, նրա քաղաքականության դիրքերում, որքան նրանք գիտակցությամբ և ներքին հոգեբանությամբ ու համոզմունքներով լինեն պարտիական, այնքան ավելի ճշմարտացի կարտացոլվի մեր ներկան, այնքան ավելի որոշակի ու հմայիչ կներկայացվի մեր գալիքի հեռանկարները։ Գորկին նկատում է, որ հեղինակի հայացքները կմնան օդում կախված, եթե նրա «փորձը չի կազմակերպված մեթոդոլոգիապես, եթե նրա էմոցիաները չեն ներդաշնակում նրա ինտելեկտի հետ»[2]։ Այս միասնությունը մեր գրականության ժողովրդայնու-

[2] Там же, стр. 426.

թյան. նրա ուժի ու ազդեցության, նրա գաղափարական անաղարտության հիմքն է։ Գրականության պարտիականության սկզբունքը շատ ավելի որոշակի արտահայտվում է հենց մեր գրականությանը հատուկ ռևոլյուցիոն ռոմանտիկական բնույթի մեջ։ Մարքս-Լենինյան ուսմունքի, պարտիականության, գրականության ժողովրդայնության և նրա ռևոլյուցիոն ռոմանտիկական բնույթի ու բովանդակության մեջ ոչ միայն հակասություն չկա, այլ, ընդհակառակը, այստեղ գոյություն ունի սերտ միասնություն ու ներդաշնակություն, փոխադարձ պայմանավորվածություն։

* *

Սոցիալիստական ռեալիզմի սովետական գրականության մեջ ռոմանտիկականը ունի արտահայտման ու դրսևորման իր առանձնահատկությունները, իր նոր բովանդակությունը, կոչումն ու խնդիրները։ Ռոմանտիկականը մեր գրականության մեջ իրականության նկատմամբ ունեցած իր փոխհարաբերությունների մեջ ելնում է համապատասխան հիմքերից և գրական գեղարվեստական ուրույն ըմբռնումների ու միջոցների արդյունքն է։ Ռոմանտիկականի դրսևորումը, նրա գեղարվեստական առարկայացումը ստեղծագործության մեջ տեղի է ունենում երկու կերպ։ Մի դեպքում այն ստեղծվում է որպես ապագայի իրական պատկերում՝ գալիքի հեռանկարների, ապագայի խորքը թափանցելու և այն գեղարվեստական կենդանի ու համոզիչ պատկերների մեջ առարկայացնելու միջոցով, մյուս դեպքում հենց գոյություն ունեցող իրականության և մարդկանց բազմակողմանի հարաբերությունների մեջ, իրոք, հերոսականն ու վեհը, գեղեցիկն ու ոգևորիչը ճշմարտացի պատկերելու, նրանց արվեստի էմոցիոնալ գրավչության աստիճանին բարձրացնելու միջոցով։ Մեր կյանքում այս երկու կողմերը անջատված ու իրար հակադրված չեն, նրանք փոխադարձ պայմանավորվածության, սերտ միասնության ու ներդաշնակության հարաբերությունների մեջ են։ Գալիքի հեռանկարները իրենց որոշակի իրականացումը, կոնկրետ առարկայացումը աստիճանաբար, բայլ առ քայլ ստանում են մեր մարդկանց առօրյա գործունեության մեջ։ Եվ որքան մեծ են, վիթխարի մեր հեռանկարները, այնքան հերոսական է մեր առօրյան, այնքան իմաստալից է մեր աշխատանքը ու ոգևորիչ։

Սովետական գրականության խնդիրն է մեր այս իրականության հարազատ արտացոլումը, մեր մարդկանց շնորհալի գործերի, նրանց ամենօրյա հերոսացման, նրանց առօրյա, բայց պատմական սխրանքների գեղարվեստական մարմնացումը։ Այդ ամենի գեղարվեստական ճշմարտությունն ինքնին ենթադրում է ռոմանտիկան ստեղծագործության մեջ, հերոսականը դարձնում գրականության բովանդակության բնորոշ կողմ։ Հերոսական պաթոսը, որը մեր իրականության հատկանշական գիծն է, պետք է պայմանավորի գեղարվեստական ստեղծագործության ներքին բովանդակությունը և արտահայտման նրա ձևը։ Սովետական իրականության մեջ մարդը դարձավ աշխարհը վերափոխող ուժ, հերոսացումը ստացավ մասսայական բնույթ ու բովանդակություն, բարձրացավ աշխատավոր մասսաների դարերով կաշկանդված պոտենցիալ ստեղծագործական կարողությունը և ազատ աշխատանքի ձևով իրեն դրսևորեց որպես իրականության կառուցման հզորագույն ուժ։ Մեր գրականության մեջ ներկայացվող հերոսական մարդը, նրա սխրագործությունը եզակի կամ ինդիվիդուալ բովանդակություն չունի, այն համընդհանուր է, համաժողովրդական։

Իզուր չէ, որ Գորկին ընդգծելով առաջին հերթին իր գրչակիցներին, գրում էր. «Մենք ապրում ենք հրջանակ երկրում, որտեղ կա սիրո և հարգանքի արժանի մարդը։ Մեզ մոտ սերը դեպի մարդը կարող է ծագել և ծագում է նրա ստեղծագործական էներգիայի հանդեպ զարմանքի զգացողությունից, մարդկանց դեպի նրանց աշխատանքային կոլեկտիվ անսահման ուժն ունեցած փոխադարձ հարգանքից, որը ստեղծում է կյանքի սոցիալիստական ձևերը, սիրուց դեպի պարտիան, որը հանդիսանում է ողջ երկրի աշխատավոր ժողովրդի և բոլոր երկրների պրոլետարների ուսուցիչը»[1]։

Ժողովրդական մասսաների հիացական աշխատանքը, կոլեկտիվ ուժի միասնությունը և նրա իմաստուն ղեկավարումն ու նրան ճշմարտացի ուղղություն տալը Կոմունիստական պարտիայի կողմից՝ ահա այն հիմքերը, որոնց վրա բարձրանում է մեր գրականությունը։ Սովետական գրականությունը կոչված է լինելու մեր ժողովրդի հերոսական աշխատանքային թափի, նրա իդեաների, ցանկությունների և իդեալների գեղարվեստական իմաստավորումը։ Գեղարվեստական ստեղծագործությունը իրականության, երևույթների, մարդկանց ներքնաշխարհի, բազմազան գործունեության և հարաբերությունների կոնկրետացումը առաջին հերթին կատարում է զգացողական, կենդանի ու հարուստ էմոցիաների արտահայտման միջոցով։

Սովետական գրականության համար այս առումով բացահայտվում են նոր ու լայն հնարավորություններ։ Մեր մարդկանց նոր մտածելակերպը, զգացողական աշխարհի հարստությունը և այդ հարստության ազատ ու անկաշկանդ դրսևորումները, նրանց մտքի անկաշկանդ սլացքը, զգացմունքների, ակնկալումների ու տենչների, երազների ու նպատակների խորությունն ու վեհությունը մեր գրականությանը տալիս են ստեղծագործական նոր-նոր անսպառ աղբյուր։ Մեր գրողների առաջ կանգնած է մի դժվարին, բայց պատվավոր ու հրապուրիչ խնդիր՝ կարողանալ արվեստի սպեցիֆիկումի ուժով մարմնավորել մարդու նոր զգացմունքները, նրա հերոսական կերպարը՝ իր ողջ բազմազանության ու խորության մեջ։ Այս խնդրի իրականացման ճանապարհին մեր գրականությունը չի կարող չունենալ ռոմանտիկական շունչ։ Ռոմանտիկականը ստեղծագործության մեջ ամենից առաջ էմոցիոնալ-զգացողական խորությունն ու գրավչությունն է, ոգևորելու և վեհացնելու նրա կարողությունը։ Սովետական գրականության ռոմանտիկական կենդանի կոնկրետությունը դրսևորում է հենց նկարագրվող երևույթների էմոցիոնալ խտության ու խորության, նրա դեպի գալիքն ու գեղեցիկը ունեցած ուղղվածության մեջ։ Ռեալիստականը բացահայտում է ճշմարտությունը, ռոմանտիկականը հաստատում է նորն ու կատարյալը, նրան տալով գրավչության ու թռչանքի ուժ, զարգացման որոշակի հեռանկարներ, հաղթանակի անխուսափելիություն։ Իսկ այդ պրոցեսը այնքան ավելի համոզիչ կլինի գեղարվեստական տեսակետից, որքան այն առավել օժտված կլինի կենդանի զգացողությամբ։

Գրական ստեղծագործության մեջ ռոմանտիկականի զգացողական բովանդակությունը ընդհանուր, միասնական ու ամբողջական սկզբունք է դառնում առանձին մասնակի արտահայտությունների, առանձին մասնավոր դրսևորումների համախմբման, միավորման ուղիով՝ մի միասնական, կարգավորող գաղափարի կամ նպատակի որոշակի հեռանկարի ուղղությամբ։

[1] Там же, стр. 614.

Ստեղծագործության առանձին հերոսներ, կերպարներ ու պերսոնաժներ իրենց ինքնատիպ, տարբերակված մտածելակերպով, զգացողության դրսևորման իրենց յուրահատկություններով, իրենց գործունեության ու ապրումների անհատական հատկություններով ամրողջացվում են ընդհանուր, միասնական, սկզբունքային, իդեալը, միասնական նպատակը։

Եթե միևնույն երևույթը, միևնույն իդեալն ու նպատակը ստեղծագործության բոլոր հերոսները ընկալեին և պատկերացնեին միևնույն շարլոնով, նույն ու նման իրար, ոչ, ի դեպ, որոշ ստեղծագործությունների մեջ հաճախ է պատահում, ապա այդ դեպքում ստեղծագործությունը կզրկվեր կենդանությունից, բազմազանությունից ու խորությունից և հերոսները կդառնային լոկ հնդինակի գաղափարի պատրաստի խոսափողերը, և ոչ իրականության առաջնթացի բարդ ու բազմակողմանի պրոցեսի կենդանի կրողներն ու մարմնավորումները։ Շոլոխովի «Խաղաղ Դոն» վեպի դրական սկիզբը վերջին հաշվով պատմական այն նշանակալից բեկման հաստատումն է, թե Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սովետական կարգերի հաղթանակը պատմական անխուսափելիություն է։ Սակայն այս պրոցեսի զգացողությունն ու պատկերագումը տարբեր հերոսների մոտ տարբեր արտահայտություն ունի։ Այդ բանը Շտոկմանը կոմունիստ կոմիսարի իրեն հատուկ զգացողությամբ է պատկերացնում, Միխայիլ Կոշևոյը մի այլ ձևով, իսկ Գրիգորի Մելեխովը բոլորովին այլ կերպ, բայց վերջին հաշվով այս տարբերությունները միավորվում են և առանձին-առանձին հաստատում միևնույն իրողությունը։

Սոցիալիստական ռեալիզմի սովետական գրականության մեջ ռոմանտիկականի հատկանշական կողմերից մեկն այն է, որ աչք իր մեջ մարմնավորում է կյանքի առաջընթացի հեռանկարը տալու կարողությունը։ Առանց այդ կարողության մեր գրականությունը կմնար լոկ կյանքի կցորդի դերում, կգնար կյանքի պոչից և միայն կարձագանքեր իրողությունները։ Գրականության դերը, սակայն, ոչ միայն կյանքի հետ համաչափ քայլելն է, այլ նաև իրական փաստերից վեր բարձրանալու կարողությունը, գեղարվեստական այնպիսի ընդհանրացումների կատարումը, որոնք լինեն գալիքի մեջ թափանցման արտահայտությունը։ Միանգամայն իրավացի էր Գորկին, երբ գրում էր, թե մեր գրողը պետք է կարողանա այսօրվա մեջ տեսնել ապագան, և ապագայի դիրքերից նայել ներկային։ Ներկան ապագայի դիրքերից գնահատելու և իմաստավորելու սկզբունքը մեր գրականության, այսպես ասած, իրական ռոմանտիզմի կարողությունն է։

Սոցիալիստական ռեալիզմի գրականությունը իրականության գեղարվեստական կոնկրետացման մեթոդի այս առանձնահատկություններով տարբերվում է ոչ միայն անցյալի ռևոլյուցիոն ռոմանտիզմից, այլև անցյալի ռեալիզմից ընդհանրապես։ Անցյալի ռեալիստական գրականության համար դժվարին պրոբլեմ էր գրական հերոսի կերտման պրոբլեմը։ Դոստաևսկին նկատում էր, թե անսահմանորեն դժվարին խնդիր է գրական, կատարյալ մարդու պատկերումը։ «Դրանից դժվարին աշխարհում ոչինչ չկա»,— ցավով խոստովանվում էր նա, դրանով իսկ արտահայտելով անցյալի բոլոր ռեալիստների առաջ կանգնած դժվարությունը։ Եթե ռեալիստների համար անվճռելի հարց էր իսկապես դրական հերոսի, կատարյալ մարդու ստեղծումը գրականության մեջ, ապա ռոմանտիկները հաճախ հաշվի չէին նստում այդ դժվարության հետ, նրանք հաշվի չէին առնում այն բանը, թե իրականությունը տալիս է նրանց, արդյոք,

այդ իդեալական անհատներին, թե չէ, թեկուզ և արստրակտ ձևով։ Սոցիալիստական ռեալիզմի սովետական գրականության համար չկան այդպիսի դժվարություններ։ Մեր իրականությունը ստեղծել է այդպիսի հերոսներ ու մասսայական հերոսություն, և այն միշտ վերանորոգման պրոցեսի մեջ է։

Սովետական գրականության առաջ բացահայտված են իրականության ամենախորը ու բազմակողմանի արտացոլման և դրական իդեալի որոշակի հաստատման անսահման հնարավորություններ։

* * *

Սոցիալիստական ռեալիզմի սովետական գրականությունը իր ձևավորման ու զարգացման առաջին իսկ քայլերից ընթացել է իրականության գեղարվեստական արտացոլման ճշմարտացի ուղիով։ Մեր հասարակության զարգացման համապատասխան էտապներում այն ունեցել է համապատասխան բովանդակություն ու բնույթ, նպատակ ու խնդիրներ։ Այն միշտ հանդես է եկել որպես իրականության կողմից օբյեկտիվ անհրաժեշտությամբ առաջ բաշված հարցերի գեղարվեստական կոնկրետացումը և ստեղծագործական իմաստավորումը։

30-ական թվականները, որոնք հանդիսացան մեր երկրում սոցիալիստական հասարակական հարաբերությունների ամբողջ ճակատով հաստատման ժամանակաշրջան, նշանակալից թափ հաղորդեցին գրականության հետագա զարգացմանը։ Այն առնականացավ և դարձավ կարևոր գործոն սոցիալիստական հասարակության կառուցման, մեր մարդկանց սոցիալիստական ոգով դաստիարակելու գործում։ Սովետական գրականության լավագույն ստեղծագործությունները՝ Շոլոխովի «Հանգիստ Դոն» և «Հերկած խոպան», Ֆուրմանովի «Չապաև», Ֆադեևի «Ջախջախում», Օստրովսկու «Ինչպես էր կոփվում պողպատը», Մայակովսկու պոեզիան և շատ այլ ստեղծագործություններ սուրբի են ընկնում ռեալիստական ռոմանտիկայի իրենց բնույթով, մեր ժողովրդի հերոսական պայքարի և աշխատանքի, սոցիալիստական կառուցման առօրյայի հերոսական հեքի ձևավորման և մեր պայծառ ապագայի հեռանկարների ճշմարտացի պատկերմամբ։

Գրականության զարգացման այս էտապում սովետահայ իրականության մեջ ռեալիստական ռոմանտիկան իր իրական արտահայտությունն ստացավ մասնավորապես Չարենցի պոեզիայում և Սակունցի, իր ուրույնության մեջ արդեն ձևավորվող, արձակում։ Չարենցի պոեզիան սովետական իրականության, սովետական մարդկանց տիտանական ուժի և հերոսական թափի ռոմանտիկական ոգեշունչ գովքն էր, որի մեջ պոետը կարողացավ տեսնել նոր մարդու նոր հատկանիշները։ Նա պատուց իրականության ռեալիստական արտացոլման նախկին պատկերացումների շրջանակները, և զարգացման պրոցեսի մեջ տեսավ ոչ միայն այն, ինչ առարկայական կեցություն էր, այլ նաև այս, ինչ ճեղքելով իրականությունը՝ բարձրանում էր որպես տիրապետող նոր ուժ։ Չարենցի պոեզիայում մարդ անհատի ուժերի գեղարվեստական պատկերումը հասավ առասպելական թվացող բարձրության, այն աստիճանին, որ նա կարող է արևներ շպրտել երկինք։ Սակայն առավելապես առասպելական թվացող այս ուժը իրական էր։ Պոետը կարողացավ տեսնել ազատագրված մարդու, իրենց սեփական երջանկության կառուցմամբ ոգևորված մասսաների

ներքին անսահման ուժերը, որոնք տիտանական թափով վերափոխում են իրականությունը։ Չարենցի էպիկական շունչը ամենահզոր է, ստեղծարար, լի կենսական ուժով և անսասան հավատով մարդու ապագայի նկատմամբ։ Չարենցի պոեզիայում ռոմանտիկականը առարկայանում է էպիկականի կտավի հերոսական պաթոսի և լիրիկական հերոսի ինքշանքի ու շոյիչ հրապուրանքի մեջ։ Ռոմանտիկական ուժը նրանում ամբողջանում է մի կողմից կոնկրետ իրականության առօրյա երևույթների նշանակալիցության որոնման ու հայտնաբերման և նրանց պոետական անթների պատկերումների, մյուս կողմից գալիքի, որպես «առօրյա» հերոսապատումների անխուսափելի հետևանքի, անվերապահ հաղթանակի հաստատման միասնության միջոցով։

Ռոմանտիկականի բովանդակությունը հարազատ ու անրաժանելի հատկանիշ է Ակսել Բակունցի պատմվածքների ու նովելների համար։ Բակունցի մոտ ռոմանտիկականի արտահայտությունն ունի գեղարվեստական կոնկրետացման իր ինքնատիպությունները։ Առանձնահատկությունը չի բխում ու պայմանավորվում միայն ժանրային տարբերություններով, այլ ամենից առաջ ստեղծագործական ոճի և հեղինակային անհատականության գործոններով։ Բակունցի ստեղծագործության մեջ ռոմանտիկականի գեղարվեստական կոնկրետացումը տեղի է ունենում ոչ թե նրա ուղղակի կամ բացահայտ հաստատման ուղիով, այլ գերազանցապես, որպես ինքնին հասկանալի, նկարագրվող իրականության, դեպքերի և երևույթների տրամաբանական անխուսափելի հետևանք։ Բակունցի ռոմանտիկականի ամբողջությունը հանգում է նոր ձևավորվող հասարակական հարաբերությունների հաստատաքայլ առաջընթացին, նրա օբյեկտիվ հաղթանակին և նրա հաստատմանը։ Սակայն այդ նորը Բակունցի մոտ հեռագծվում է հին կացութաձևերի անվերադարձ կործանման պրոցեսի ճշմարտացի նկարագրության մեջ։ Հին հարաբերությունների, մտածելակերպի ու պատկերացումների, կենցաղի ու սովորությունների քայքայման, կենսունակության սպառման պրոցեսի բացահայտումն է առաջին պլանի վրա. և այն, կարծեք, երևացող և շոշափելի իր գոյությամբ ամբողջացնում է ստեղծագործության բովանդակությունը և թվում է, թե լիովին գրավում է հեղինակի ողջ ուշադրությունը, շրջանակավորում նրա տեսադաշտը։ Բայց իրականում հեղինակի ներքին հայացքը անցնում է գոյություն ունեցողի շրջանակներից, ստեղծագործության առաջատար ու կարգավորող գաղափարի ուժով, երբեմն կարծեք աննկատելի, թափանցում է հեռուն, ընկալում գալիքը։ Հենվում նրա վրա և այդ հենարանից ու նրա հաստատման հեռանկարներից արտացոլում տեղի ունեցող իրական պրոցեսը։ Գալիքի այդ շատ հաճախ չանվանարկող հեռանկարը իր կենսունակության ուժով համոզիչ է դարձնում իրականության գեղարվեստական պատկերը, հնի խորտակման անխուսափելի անհրաժեշտությունը և դրանով իսկ հաստատում իր գոյության ու տիրապետության օբյեկտիվ բնույթը։ Բակունցի ստեղծագործական ոճի համար ինքնատիպությունն այն է, որ նրա մոտ զարգացման պրոցեսի մեջ հետևանքները դրական իդեալի հաստատման կոնկրետությունը ինքնին ստացվում է որպես իրականության նկարագրության տրամաբանական ընթացքի անհրաժեշտ հետևանք։

Իր զարգացման հետագա շրջանում սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդը առավել բազմակողմանի դրսևորեց իրականության ճշմարտացի ու խորը, այն իր ռևոլյուցիոն պրոցեսի մեջ և պատմական

կոնկրետությամբ արտացոլելու անսահման հնարավորություններ։ Ռեալիստական արտացոլման խորությունն ու բազմակողմանիությունը ավելի օրգանապես միավորվեց ռոմանտիկական բնույթի, գրական իդեալի բացահայտման ու հաստատման հետ։ Ռոմանտիկականը մեր գրականության մեջ ավելի ընդարձակվեց ու կոնկրետացավ՝ համապատասխան հասարակության զարգացման հեռանկարների ավելի որոշակի դառնալուն։

Սովետական գրականությունը կյանքի ռևոլյուցիոն ռոմանտիկան գեղարվեստորեն մարմնավորելու իմաստով նշանակալից հաջողությունների է հասել առանձնապես այս վերջին տարիների ընթացքում։

Սովետական գրականության զարգացման վերջին շրջանի առավել նշանակալից ստեղծագործություններում, ինչպես օրինակ, Շոլոխովի «Մարդու ճակատագիրը», Լեոնովի «Ռուսական անտառը», Նիկոլաևայի «Հունձ», «Ռազմատամարտ ուղու վրա», Կոչետովի «Երջով նրայրներ», Գոնչարի «Դրոշակակիրները», Տվարդովսկու պոեզիան, Սիմոնովի «Կենդանիները և մեռածները» և ուրիշ շատ ստեղծագործություններում, սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդը ձեռք է բերել նոր հաղթանակներ։ Այս ստեղծագործությունների համար տիպականը մեր հասարակության ապագայի հեռանկարների առավել որոշ ու հստակ պատկերումն է, մեր մարդկանց երջանիկ ապագայի համար՝ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ իրականացվող աշխատանքային նորանոր սխրագործությունների ներքին էության ու ուղղվածության բացահայտումը, մարդկանց ներքնաշխարհի, մտածությունների ու պատկերացումների մեջ տեղի ունեցող նոր երևույթների հայտնաբերումն ու գեղարվեստական մարմնավորումը։

Ռոմանտիկականի իդեալը, նրա բովանդակությունն ու կոչումը, նրա ուղղվածությունն ու նպատակները սովետական գրականության մեջ ընդհանրական են ու տիպական, սակայն յուրաքանչյուր առանձին վերցրած ստեղծագործողի, անգամ առանձին ստեղծագործությունների մեջ նրա արտահայտումն ու դրսևորումը տեղի է ունենում տվյալ ստեղծագործությանը յուրահատուկ ու ինքնատիպ ստեղծագործական ոճական առանձնահատկություններով։ Ստեղծագործական ինքնատիպության և ոճական առանձնահատկությունների բազմազանության ու բազմապիսության անառարկելի հարստությունը սովետական գրականության մեջ մեկ անգամ ևս հերքում է այն անհիմն զրպարտանքը, թե սոցիալիստական ռեալիզմի գրականությանը, իբրև թե, հատուկ է միակողմանիությունն ու միատարրությունը և բացակայում է ստեղծագործական ինքնատիպության բազմազանությունը։ Սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդի՝ իրականության գեղարվեստական լիարժեք պատկերման անսահման հնարավորությունների յուրացման իր ուղու վրա նշանակալից հաջողությունների է հասել նաև սովետահայ գրականությունը։ Սովետահայ արձակն ու պոեզիան ավելի են մոտեցել կյանքին, առավել սերտ կապվել ժողովրդի հետ՝ հասել իրականության, կյանքի ճշմարտության ավելի խորն ու բազմակողմանի բացահայտմանը։ Չարյանի, Շիրազի, Խանզադյանի, Մահարու, Սահյանի, Հովհաննիսյանի և սովետահայ գրականության այլ ներկայացուցիչների ժամանակակից ստեղծագործություններում կյանքի ռեալիստական ճշմարտության մարմնավորումը միահյուսվել է կյանքի առաջընթացի ռևոլյուցիոն-ռոմանտիկական թափի ու հևքի պատկերման հետ։

* * *

Սոցիալիստական ռեալիզմի սովետական գրականության համար այժմ ստեղծվում են զարգացման ու առաջընթացի անսահման հնարավորություններ ու հեռանկարներ։ Սովետական երկրի զարգացման ժամանակակից էտապը բնութագրվում է պատմական նշանակալից բեկումներով։ Մեր հայրենիքն ապրում է իր ուժերի աննախընթաց ծաղկում։ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXI համագումարը գիտականորեն կանխագծեց մեր հասարակության զարգացման հիասքանչ հեռանկարները, զինեց մեր ժողովրդին և ոգեշնչեց նրան դեպի նոր սխրագործություններ ու հերոսացում։ Համընդհանուր ոգևորությունն ու հերոսացումը, աշխատանքային սխրագործությունն ու մտքի թռիչքը կազմում են մեր իրականության բնութագրական կողմը։ Կոմունիստական հարաբերությունները համառորեն մտնում են մեր առօրյայի մեջ, դառնում կենցաղ, մարդկանց հասարակական վարքագիծը բնորոշող գործոն։

Ամենուրեք ծավալվում են կոմունիստական աշխատանքի և ուսուցման բրիգադների գործունեությունը։ Վալենտինա Տագանովայի և այլոց կոմունիստական օրինակը ծավալվում է մեր գործարաններում ու ֆաբրիկաներում, կոլխոզներում ու սովխոզներում, երկիրը հաստատ քայլերով՝ էկոնոմիկայի, կեցության ու հոգեբանության մեջ մտնում է նոր, մարդկանց միջև կոմունիստական հարաբերությունների ժամանակաշրջանը։ Մարդկության դարավոր երազանքները ու իղձերը դառնում են կոնկրետ իրականություն։ «Մեր ժամանակը — ասում է ընկեր Խրուշչովը,— կարող է և պետք է դառնա մեծ իդեալների իրականացման ժամանակ...»։ Հասարակայնորեն ու քաղաքականորեն ապահովված են այն բոլոր պայմանները, որոնք հնարավոր են դարձնում ամենաանհավանական թվացող իդեալների իրականացումը։ Այդ իդեալները ոգևորիչ են, գեղեցիկ, կատարյալ ու հումանիստական, և ժողովուրդը ամենահանդուգն հերոսացումներով հասնում է այդ իդեալների իրականացմանը։ «Մեր օրերին,— ասաց ընկեր Խրուշչովը,— մարդիկ իրենց ձեռքերով իրականացնում են այն, ինչը դարեր շարունակ երազել է մարդկությունը, այդ երազանքներն արտահայտելով անիրագործելի երևակայություն թվացող հեքիաթների ձևով...»։ Այժմ մեզ համար այլևս չկան անիրագործելի երևակայություններ, անիրականանալի իդեալներ ու երազանքներ։ Մեր մարդկանց հերոսական աշխատանքը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ողջ աշխարհին ցույց է տվել ու համոզել, որ երևակայության ամեն մի թռիչք, յուրաքանչյուր խիզախ իդեալ ու «հեռավոր» կանխատեսում կարող է և պետք է դառնա իրականություն։

Մեր հասարակության զարգացման ժամանակակից էտապը և նրա հեռանկարները իրոք հերոսական են, հերոիկանը մեր կյանքի բնութագրական կողմն է և այն իրենով պետք է պայմանավորի և պայմանավորում է մեր գրականության բնույթն ու բովանդակությունը։ Իդեալի գեղեցկությունը և մեր կյանքի առօրյան ոչ միայն չեն հակադրվում իրար, այլ ընդհակառակը, խիստ միասնական են ու ներդաշնակ։ Այդ ներդաշնակ միասնության գեղարվեստական իմաստավորումը մեր գրականության սրբազան պարտքն է։

Մեր ժամանակներում գրականությունից պահանջվում է ավելի համարձակորեն դրսևորել սոցիալիստական ռեալիզմի համար բնութագրական հատկանիշ կազմող ռոմանտիկականը, այն, գրականության մեջ, իրոք դարձնել կյանքի վերափոխումը խթանող և մարմնավորող գործոն։ Սովետական գրա-

կանության սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործական մեթոդը կյանքի ճշմարտություն բազմակողմանի ու խոր արտացոլելու անսահմանափակ հնարավորությունների յուրացման ճանապարհին կհասնի նորանոր հաջողություններ, եթե նա այսուհետև էլ աներեր կանգնած մնա մարքս-լենինյան ռևոլյուցիոն ուսմունքի դիրքերում, ժողովրդի շահերին անձնուրաց ծառայելու դիրքերում։ Այս է մեր գրողների՝ սոցիալիստական ռեալիզմի իրենց ստեղծագործական մեթոդին հարազատ մնալու հիմքը։ Այս ուղիով մեր գրականությունը կհասնի մեր իրականության ժամանակակից էտապին արժանի գեղարվեստական լիարժեք ստեղծագործություններ տալու իր գերագույն պարտքի իրականացմանը։